Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

Բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ

Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում ծրագիր

Վարկ թիվ 8495-AM

2025թ. հունիսի 30-ի դրությամբ և 2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանի համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն	7
Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն	8
ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ	9
Հատուկ հաշվի հաշվետվություն	10
Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

Բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) 8495-AM վարկային համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) կից ներկայացված Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2025թ. հունիսի 30-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, 2025թ. հունիսի 30-ի դրությամբ և 2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանի համար Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը և հատուկ հաշվի հաշվետվությունը, ինչպես նաև ծախսերի մասին հաշվետվությունը (ԾՄՀ), որը ներկայացվել է Համաշխարհային Բանկ՝ 2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանի համար՝ 8495-AM վարկային համաձայնագրի շրջանակներում համալրումները հիմնավորելու նպատակով, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները տալիս են Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում ծրագրի՝ 2025թ. հունիսի 30-ի դրությամբ ֆինանսական վիճակի և 2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանի ընթացքում ստացված ֆոնդերի և ճանաչված ծախսերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ուղեցույցների, 8495-AM վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների:

Ի հավելումն, մեր կարծիքով ներկայացված ԾՄՀ-ները, ինչպես նաև դրանց պատրաստման համար ներդրված ներքին վերահսկողությունը և ընթացակարգերը կարող են վստահելի հիմք հանդիսանալ 8495-AM վարկային համաձայնագրի շրջանակներում համալրումների համար:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ից (այսուհետև՝ Ընկերություն)՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ

պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

- Մենք ուշադրություն ենք հրավիրում Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի վրա, որտեղ նկարագրվում է հաշապահական հաշվառման հիմունքը: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու Ընկերության ղեկավարությանը՝ ՎՀՄԲ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:
- Մենք ուշադրություն ենք հրավիրում Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 3-ի վրա, որտեղ նկարագրվում է, որ Ծրագիրն ավարտվում է 2024թ. դեկտեմբերի 31-ին: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, ՎՀՄԲ ուղեցույցների, ինչպես նաև 8495-AM վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների համաձայն պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ծրագրի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Գնահատում ենք Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

11 հուլիսի 2025թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

ԱՄՆ դոլար	Ծանոթ.	30 հունիսի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ակտիվներ			
Ծրագրի կուտակային ծախսեր		24,478,329	23,689,893
Կանխավճարներ	4	3,000	284,143
Մնացորդներ բանկերում		-	127
Ընդամենը ակտիվներ		**24,481,329**	**23,974,163**
Ֆոնդեր և պարտավորություններ			
Ծրագրի կուտակային ֆինանսավորում		21,575,304	20,908,347
Եկամտի այլ աղբյուրներ		1,166,408	1,113,011
Փոխարժեքային տարբերություն		3,476	3,936
Կրեդիտորական պարտքեր	5	1,736,141	1,948,869
Ընդամենը ֆոնդեր և պարտավորություններ		**24,481,329**	**23,974,163**

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. հուլիսի 11-ին՝

Դավիթ Միրզոյան
Գլխավոր տնօրեն

Իրինա Կարապետյան
Հաշվապահական հաշվառման բաժնի պետ

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

2025թ. հունիսի 30-ի դրությամբ և 2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանի համար

	Փաստացի		Պլանավորված *		Տարբերություն		
ԱՄՆ դոլար	**2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջան**	**30 հունիսի 2025թ.**	**2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջան**	**30 հունիսի 2025թ.**	**2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջան**	**30 հունիսի 2025թ.**	**Ծրագիր**
Ֆոնդերի աղբյուրներ							
ՎԶՄԲ վարկ թիվ 8495-ԱՄ (տե՛ս Ծանոթ. 6)	523,303	17,242,130					
Կառավարության համաֆինանսավորում	131,258	4,300,357					
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ֆինանսավորում	12,396	32,817					
Եկամտի այլ աղբյուրներ	53,397	1,166,408					
Ընդամենը	**720,354**	**22,741,712**					
Փոխարժեքային տարբերություն	(460)	3,476					
Նվազեցնել. Ֆինանսավորման օգտագործում							
Հոդված **1**. Ծրագրի Մաս 1(ա), 1(գ) և 1 (ե)-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր							
	788,436	24,423,843	1,648,426	28,925,000	(859,990)	(4,501,157)	28,700,900
Սկզբնավճար	-	54,486	-	54,486	-	-	54,486
Ընդամենը	**788,436**	**24,478,329**	**1,648,426**	**28,979,486**	**(859,990)**	**(4,501,157)**	**28,755,386**
Շրջանառու կապիտալի զուտ նվազում (տե՛ս Ծանոթ. 8)	**(68,542)**	**(1,733,141)**					

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն

2025թ. հունիսի 30-ի դրությամբ և 2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանի համար

	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն		
ԱՄՆ դոլար	**2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակա-շրջան**	**30 հունիսի 2025թ.**	**2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակա-շրջան**	**30 հունիսի 2025թ.**	**2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակա-շրջան**	**30 հունիսի 2025թ.**	**Ծրագիր**
Բաղադրիչ 1: Էլեկտրահաղորդման ցանցի ամրապնդում							
Ենթաբաղադրիչ 1.1 Աշնակում և Արարատ 2-ում տեղակայված էկետրական ենթակայանի վերականգնում	776,088	23,760,127	1,636,078	28,272,766	(859,990)	(4,512,639)	28,140,901
Ենթաբաղադրիչ 1.2 Ծրագրի իրականացման աջակցության տրամադրում	12,348	615,879	12,348	604,397	-	11,482	508,113
Ենթաբաղադրիչ 1.3 Ծրագրի աուդիտ	-	47,837	-	47,837	-	-	51,886
Սկզբնավճար	-	54,486	-	54,486	-	-	54,486
Ընդամենը	**788,436**	**24,478,329**	**1,648,426**	**28,979,486**	**(859,990)**	**(4,501,157)**	**28,755,386**

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ

2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանի համար

Դիմումի համար	Հոդված 1.Ծրագրի Մաս 1(ա), 1(գ) և 1 (ե)-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր
DA-101	8,331
DA-102	2,072
Ընդամենը	**10,403**

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Հատուկ հաշվի հաշվետվություն

Վարկ թիվ 8495-ԱՄ

2025թ. հունիսի 30-ի դրությամբ և 2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանի համար

ԱՄՆ դոլար

Սկզբնական մնացորդ 2025թ. հունվարի 1-ի դրությամբ		127
Ավելացնել.		
Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն	-	
Վարկի համալրում ժամանակաշրջանի ընթացքում	523,303	
	523,303	523,303
Նվազեցնել. Հատուկ հաշվից հեռվերադարձ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկին ժամանակաշրջանի ընթացքում	-	-
Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1)		523,430
Վերջնական մնացորդ 2025թ. հունիսի 30-ի դրությամբ		-
Ավելացնել.		
Ժամանակաշրջանի ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար	523,430	
Ծառայության վճարներ (եթե առկա է)	-	
	523,430	523,430
Նվազեցնել. Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին)		-
Ընդամենը հաշվառված կանխավճար (2)		523,430
Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2)		-

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ

Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում ծրագիր

Վարկ թիվ 8495-AM

2025թ. հունիսի 30-ի դրությամբ և 2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանի համար (արտահայտված ԱՄՆ դոլարով)

1 Գործառնությունների բնույթը

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ (այսուհետև՝ Ընկերություն) ստեղծվել է ՀՀ Կառավարության 1998թ. հուլիսի 20-ի թիվ 450 որոշման հիման վրա «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» դուստր ձեռնարկությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման և ՀՀ կառավարության 1999թ. նոյեմբերի 23-ի թիվ 709 որոշման հիման վրա «Էներգետիկ օբյեկտների մասնագիտացված պահպանություն» պետական փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու միջոցով, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերությանը միացման ճանապարհով: Ընկերությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» դուստր ձեռնարկության, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերության և «Էներգետիկ օբյեկտների մասնագիտացված պահպանություն» պետական փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդն է:

Ընկերությունը իրականացնում է Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որը ֆինանսավորվում է 2015թ. ապրիլի 8-ին կնքված թիվ 8495-AM վարկային համաձայնագրով՝ ստորագրված Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) և Հայաստանի Հանրապետության միջև: Համաձայն Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության և Ընկերության միջև ստորագրված ենթավարկային համաձայնագրի՝ ՀՀ Ֆինանսների նախարարությունը ՎԶՄԲ-ի կողմից 23,140,000 ԱՄՆ դոլար գումարի չափով տրամադրված վարկի գումարը փոխանցել (վերավարկավորել) է Ընկերությանը, որն էլ այդ միջոցները պետք է օգտագործի բացառապես Ծրագիրն իրականացնելու նպատակով:

Ծրագրի նպատակն է հաղորդիչ ցանցի հուսալիության բարձրացումն ու թողունակության մեծացումը, ինչպես նաև աջակցել Հայաստանի Հանրապետությանը բարձրորակ էլեկտրաէներգիայի մատակարարման հարցում:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

Մաս 1. Էլեկտրահաղորդման ցանցի ամրապնդում

(ա) Ընկերության Աշնակ և Արարատ 2 էլեկտրական ենթակայանի վերակառուցումն ի թիվս այլնի՝ (ա) հիմնական սարքավորումների ամբողջական կամ մասնակի փոխարինման և /կամ վերականգնման, (բ) վերահսկողության և տվյալների ձեռքբերման համակարգի տեղադրման և (գ) հսկողության սենյակների համար նոր շենքի կառուցման միջոցով:

(բ) Ընկերությանը օժանդակության տրամադրում՝ Ծրագրի իր Համապատասխան Մասերի, ի թիվս այլնի՝ Ծրագրի նշված Մասերի շրջանակում աշխատանքների իրականացման համար, այդ թվում՝ սույն Համաձայնագրի 2-րդ Ցանկի դրույթներին համապատասխանությունը վերահսկելու համար տեխնիկական աջակցության տրամադրման միջոցով,

(գ) Ծրագրի աուդիտների իրականացում:

Ծրագրի ֆինանսավորումը բաղկացած է հետևյալ մասերից.

Հոդված	Վարկի հատկացված գումարը (արտահայտված ԱՄՆ դոլարով)	Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսը (առանց հարկերի)
Հոդված 1. Ծրագրի Մաս 1(ա), 1(գ) և 1 (ե)-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր	23,140,000	80%
Սկզբնական վճար	54,486	
Ընդամենը	**23,194,486**	

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Զ. Անդրանիկի 1:

2 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

2.1 Պատրաստման հիմքերը

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքով, ինչպես նաև ՎԶՄԲ ուղեցույցի հոդվածների և թիվ 8495-AM վարկային համաձայնագրի համապատասխան պահանջների համաձայն: Կարևոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունները բացահայտված են ստորև:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ): Սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով (ներկայացման արժույթ):

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս հաշվեգրված ծախսերի հետ կապված գործարքները, կառավարության համաֆինանսավորումը և համաֆինանսավորման միջոցներից վճարումները՝ ԱՄՆ դոլարից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի նախորդ օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հայտարարված հաշվարկային փոխարժեքով: ՎԶՄԲ-ի միջոցներից Ծրագրի գործընկերներին կատարված ԱՄՆ դոլարից տարբեր այլ արժույթով արտահայտված ուղղակի վճարումները գրանցվում են client connection (https://clientconnection.worldbank.org) համակարգի փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցները, կանխավճարները և կրեդիտորական պարտքերը վերահաշվարկվում են՝ կիրառելով այդ ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը. 2025թ. հունիսի 30-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 384.47 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում՝ 396.56 հազար ՀՀ դրամ): Փոխարժեքային տարբերությունը ճանաչվում է ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում և փոխարժեքային տարբերության կուտակված գումարը բացահայտվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Փոխարժեքային տարբերություն» հոդվածում:

2.3 Ծրագրի ֆինանսավորում

Թիվ 8495-AM վարկային համաձայնագրի շրջանակներում հատկացված ֆինանսավորումը հաշվառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես «Ծրագրի կուտակային ֆինանսավորում» և ճանաչվում է յուրաքանչյուր համալրման ժամանակ: Ի լրումն՝ ժամանակաշրջանի ընթացքում ստացված ֆոնդերը բացահայտվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում:

2.4 Ծրագրի ծախսեր

Ծրագրային ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով: Ծրագրի կուտակային ծախսերը բացահայտվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ակտիվներում: Ի հավելումն՝ ընթացիկ ժամանակաշրջանի ծախսերը ներառվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին և ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություններում:

2.5 ՎԶՄԲ ֆինանսավորում

Վարկային համաձայնագրի համար ընդունելի ծախսերի ֆինանսավորման նպատակով Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկը վճարումներ է կատարում՝ օգտագործելով հետևյալ վճարման մեթոդներից մեկը կամ մի քանիսը.

ա) Հատուցում

Բանկը կարող է հատուցել փոխառուին՝ նրա սեփական միջոցներով կատարված ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով:

բ) Կանխավճար

Բանկը կարող է առհաշիվ վարկային վճարում կատարել փոխառուի հատուկ հաշվին՝ ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով և դրանց կատարմանը զուգընթաց, որոնց համար հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն ավելի ուշ:

գ) Ուղղակի վճարումներ

Բանկը փոխառուի հայցով կարող է վճարումներ կատարել ուղղակիորեն երրորդ անձանց՝ ընդունելի ծախսերի դիմաց:

դ) Հատուկ պարտավորագրեր

Բանկը կարող է վճարումներ կատարել երրորդ անձին հատուկ պարտավորագրի շրջանակներում ընդունելի ծախսերի փոխհատուցման համար փոխառուի գրավոր հաստատված հայցով, որը համաձայնեցված է փոխառուի և Բանկի կողմից:

2.6 Կանխավճարներ

Կանխավճարները, որոնք բաղկացած են շինարարական աշխատանքների, ծառայությունների և ապրանքների դիմաց վճարված գումարներից, չափվում են անվանական արժեքով:

2.7 Կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ներառում են վճարվելիք գումարները, որոնք չափվում են անվանական արժեքով:

3 Ծրագրի փակման ամսաթիվ

Համաձայն վարկային համաձայնագրի՝ 2023թ. հուլիսի 27-ի փոփոխության, Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2024թ. դեկտեմբերի 31-ը:

4 Կանխավճարներ

	30 հունիսի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
«Կասկադ Էներգո» ՍՊԸ	3,000	284,143
	3,000	**284,143**

5 Կրեդիտորական պարտքեր

	30 հունիսի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
«Կասկադ Էներգո» ՍՊԸ	1,736,141	1,946,289
Այլ	-	2,580
	1,736,141	**1,948,869**

Հաշվի առնելով Ծրագրի դադարեցումը՝ Կասկադ Էներգո ՍՊԸ-ին վերաբերող վճարումները կվճարվեն Ընկերության սեփական միջոցներից: Ընկերության և Կասկադ Էներգո ՍՊԸ-ի միջև թիվ HVEN-DSI-

1/2020_1 պայմանագիրը կնքվել է 2021թ. սեպտեմբերի 15-ին՝ Արարատ-2 220/110/6 կՎ վերականգնման նախագծման, մատակարարման և տեղադրման նպատակով:

6 Վարկ թիվ 8495-ԱՄ

	2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջան	30 հունիսի 2025թ.
Ուղղակի վճարումներ	-	7,821,472
ԾՄՀ ընթացակարգեր	10,403	3,358,701
Հատուկ հաշվի կանխավճար	523,303	9,654,052
Կանխավճարի մարում	(1,073,177)	(9,366,171)
Այլ ընթացակարգեր	1,062,774	6,007,471
Սկզբնավճար	-	54,486
Գումարի հետվերադարձ	-	(287,881)
	523,303	**17,242,130**

7 Ծախսեր

Համաձայն Համաշխարհային բանկի 2025թ. հունվարի 2-ի թիվ 04/14.4/5769-2024 նամակի՝ 2025թ. մայիսի 31-ից հետո նոր հաշիվ-ապրանքագրեր ընդունելի չեն: Կասկադ Էներգո ՍՊԸ-ից 185,068 ԱՄՆ դոլար արժողությամբ հաշիվ-ապրանքագիրն ընդունվել է 2025թ. հունիսի 13-ին, սակայն դրա դիմաց վճարումը կիրականացվի Ընկերության սեփական միջոցներից:

8 Շրջանառու կապիտալի զուտ աճ (նվազում)

	2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջան	31 դեկտեմբերի 2025թ.
Բանկային մնացորդների նվազում	(127)	-
Կանխավճարների աճ (նվազում)	(281,143)	3,000
Կրեդիտորական պարտքերի նվազում (աճ)	212,728	(1,736,141)
	(68,542)	**(1,733,141)**

9 «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից ստացված գումարների և Համաշխարհային Բանկի փոխհատուցումների համադրում

Վարկ թիվ 8495-AM
2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանի համար
ԱՄՆ դոլար

Հոդված	Դիմում	Ընկերություն	ՀԲ	Տարբերություն
Հոդված 1.Ծրագրի Մաս 1(ա), 1(գ) և 1 (ե)-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր				
	DA-101	549,747	549,747	-
	DA-102	2,073	2,073	-
	DA-107	521,357	521,357	-
		1,073,177	**1,073,177**	-
Հատուկ հաշվի կանխավճար (մարում)				
	DA-100	2,000	2,000	-
	DA-101	(549,747)	(549,747)	-
	DA-102	(2,073)	(2,073)	-
	DA-103	360,420	360,420	-
	DA-105	144,080	144,080	-
	DA-106	16,803	16,803	-
	DA-107	(521,357)	(521,357)	-
		(549,874)	**(549,874)**	-
Ընդամենը		**523,303**	**523,303**	-